Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի
2018 թ. հոկտեմբերի 29 -ի N 264 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՔ» ՄՕԿ-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
2018-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ԻՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագիրը կոչված է աջակցելու ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին և ծրագրի նպատակն է՝<br>- նվազեցնել ՄԻԱՎ-ի տարածումը և պահպանել ցածր տարածվածությունը բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում,<br>- տրամադրել աջակցություն և խնամք ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամ<br>1214 Վերներ, Ժնև, Շվեյցարիա |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Առաքելություն Արևելք» ՄՕԿ-ի հայաստանյան մասնաճյուղ (հասցե՝ ՀՀ, Երևան 0019, Պռոշյան 10,<br>ՀՎՀՀ՝ 01533403) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայրը՝ ք. Երևան, ՀՀ մարզեր,<br>ծրագրի բնագավառը՝ առողջապահություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 332,782 ԱՄՆ-ի դոլարին համարժեք ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում՝<br>- ՄԻԱՎ-ի նկատմամբ բնակչության առավել խոցելի խմբերի ներկայացուցիչները,<br>- ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրն իրականացվելու է 2018 թ. նոյեմբերի 1-ից մինչև 2019 թ. ապրիլի 30-ը: |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները. |

| hh | Նպատակը | Միջոցառումների նկարագրությունը | Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|
| 1. | Նվազեցնել ՄԻԱՎ-ի տարածումը և պահպանել ցածր տարածվածություն բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում (թմրամիջոցների ներարկային օգտագործողներ, մարմնավաճառներ, հոմոսեքսուալ տղամարդիկ) | Կամավոր խորհրդատվության և հետազոտության տրամադրում բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի ներկայացուցիչներին<br>(ներառում է՝ շահառուներին հայտնաբերող և դեպի բուժհաստատություններ ուղղորդող աշխատակիցների վարձավճարները, շահառուներին խորհրդատվություն տրամադրող բուժաշխատողների վարձավճարները, ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտություն իրականացնելու վարձավճարները, շահառուներին բուժհաստատություններ տեղափոխելու համար վարորդներին տրամադրվող վարձավճարները) | 162,189 |
| | | Պահպանակների տրամադրում բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի ներկայացուցիչներին | 38,000 |
| | | Սեռավարակների բուժման տրամադրում բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի ներկայացուցիչներին<br>(ներառում է՝ բուժաշխատողների վարձավճարները, սեռավարակների նկատմամբ հետազոտություն իրականացնելու վարձավճարները, դեղորայքի և բժշկական պարագաների ծախսերը) | 14,000 |
| 2. | Տրամադրել աջակցություն և խնամք ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց | Շարժական բժշկական ծառայությունների տրամադրում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց<br>(ներառում է՝ բժշկական ծառայություններ տրամադրող բուժաշխատողների վարձավճարները, վարորդներին տրամադրվող վարձավճարները) | 29,555 |
| | | Խորհրդատվության (հոգեբանական, բժշկական) տրամադրում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց փոխօգնության խմբերի կազմակերպում<br>(ներառում է՝ հոգեբանների, բժիշկների վարձավճարները, վարորդներին տրամադրվող վարձավճարները) | 24,000 |
| 3. | Կազմակերպական ծախսեր | - ԾԻԳ-ի աշխատակազմի աշխատավարձեր<br>- Ադմինիստրատիվ ծախսեր (գրասենյակի և պահեստի վարձակալություն, կոմունալ ծախսեր և այլ ծախսեր)<br>- Ֆինանսական աուդիտ | 65,038 |

<table>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է ձեռք բերել (ներմուծել) հետևյալ ապրանքներն ու ծառայությունները.
<table>
<tr><th>հհ</th><th>Ապրանքի/ծառայության անվանումը</th><th>Չափման միավորը</th><th>Քանակը</th><th>Նախատեսվող գումարը, ԱՄՆ-ի դոլար</th></tr>
<tr><td>1.</td><td>Պահպանակ (ներմուծում)</td><td>հատ</td><td>1,000,000</td><td>38,000</td></tr>
<tr><td>2.</td><td>Դեղորայք (գնում ՀՀ-ից)</td><td>-</td><td>-</td><td>3,000</td></tr>
<tr><td>3.</td><td>Բժշկական պարագաներ (գնում ՀՀ-ից)</td><td>-</td><td>-</td><td>3,500</td></tr>
<tr><td>4.</td><td>Ֆինանսական աուդիտ (գնում ՀՀ-ից)</td><td>-</td><td>-</td><td>7,500</td></tr>
<tr><td>5.</td><td>Ադմինիստրատիվ ծախսեր (գրասենյակի և պահեստի վարձակալություն, կոմունալ ծախսեր և այլ ծախսեր)</td><td>-</td><td>-</td><td>10,000</td></tr>
</table></td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր</td><td>Ծրագրի իրականացման 3 տարիների ընթացքում նախատեսվում է կատարել հետևյալ կազմակերպական ծախսերը.
<table>
<tr><th>հհ</th><th>Կազմակերպական ծախսերը</th><th>Նախատեսվող գումարը, ԱՄՆ դոլար</th></tr>
<tr><td>1.</td><td>ԾԻԳ-ի աշխատակազմի աշխատավարձեր</td><td>47,538</td></tr>
<tr><td>2.</td><td>Ադմինիստրատիվ ծախսեր (գրասենյակի և պահեստի վարձակալություն, կոմունալ ծախսեր և այլ ծախսեր)</td><td>10,000</td></tr>
<tr><td>3.</td><td>Ֆինանսական աուդիտ</td><td>7,500</td></tr>
<tr><td colspan="2">Ընդամենը</td><td>65,038</td></tr>
</table></td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնա-կառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>Ծրագրի իրականացման ընթացքում «Առաքելություն Արևելք» ՄՕԿ-ի հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ առողջապահության նախարարության և հետևյալ հասարակական կազմակերպությունների հետ՝<br>«ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» ՀԿ, «ՁԻԱՀ-ի կանխարգելման միավորում» ՀԿ, «Նոր սերունդ» ՀԿ, «Դրական մարդկանց հայկական ցանց» ՀԿ:</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Անմիջական վարչական և ծրագրային վերահսկողությունն իրականացվում է «Առաքելություն Արևելք» կազմակերպության գլխամա-սային գրասենյակի, ինչպես նաև ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի և հիմնադրամի տեղական գործակալի, ՀՀ-ում հիմնադրամի միջոցառումները համակարգող հանձնաժողովի (ՄՀՀ) կողմից:<br>«Առաքելություն Արևելք» ՄՕԿ-ի հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է նաև արտաքին աուդիտի, ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով լիազոր մարմնի, ՀՀ հարկային մարմինների կողմից:</td></tr>
</table>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՄԻՐՋՈՅԱՆ